

Ժողովուրդը քարին մասնաւոր այս հանգամանքէն տարուելով՝ երեակայեց որ կատաղի սողուն մը յանկարծ դուրս ելած է քարերէն այն պահուն՝ երբ եկեղեցիին քանդիչները գործի սկսան: ԺԲ-ԺԷ դար այս զրոյցը շարունակուած է ուխտաւորներու պատմութիւններուն մէջ անկարեւոր տարբերակներով: Greffin Affagart կը կարծէ թէ Երուսաղէմի մէկ մզկիթին շինութեան համար էր որ այս քանդումին ձեռնարկուեցաւ: Ահա անոր խօսքերը. «Պատին մէջ կային գեղեցիկ մարմարներ, այնպէս որ Սուլթանը տեսնելով այս քարերուն գեղեցկութիւնը՝ հրամայեց որ անոնք հանուին և Երուսաղէմ տարուին իր մզկիթին շինութեան համար որ կը կառուցուէր իր պալատին մօտ: Գործածաւորները երբ Սուլթանին ներկայութեան գործի ըսկըսան, խոշոր օձ մը դուրս ելաւ իր կոկորդէն կրակ ժայթքելով, և որ մեծ ուժգնութեամբ մը կը ցնցէր պատերը ու կը կոտորէր մարմարեայ քարերը, և օձը կ'այրէր այն ամէնը՝ որոնց վրայէն կը քալէր: Կը ըսպաննէր ներկաներէն շատերը, ուրիշներ ալ կը փախչէին խելագար և զգայազիրիկ: Այս դէպքէն յետոյ ոչ ոք համարձակեցաւ եկեղեցիին մօտենալ, որ կը մնայ մինչև այսօր»: Այս զրոյցը կը պատմեն նաև Bureh (էջ 79), Fabri (էջ 475), Jean Poloner (էջ 248) (B. S. N. էջ 180-191):

ե) Յովնաննես Տուեցին եւ Բերդենեակի եկեղեցիին պատկերները. — ԺԳ. դարուն Յովհաննէս եպօ. Տուեցին ուխտի կ'երթայ Բեթղեհէմի Ս. Ծննդեան վանքը եւ անոր կը պատահի հետեւեալ դէպքը զոր այսպէս կը պատմէ. «Երբ Ս. Բեթղեհէմ ուխտի գացի, տեսայ որ Ս. Առաքելոց պատկերները հոն՝ եկեղեցիին պարիս-